

Լիլիթ ՄԵԼԻՔՅԱՆ
Ուրարպու համալսարան
lilitmelikyan24@gmail.com

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՐԱԲ (ՔՈՒՎԵՅԹՅԻ) ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդվածում քննարկվում են անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման ռճային առանձնահատկություններն ու այդ ռճերից մեկին ուսուցչի նախապատվության հարցը՝ պայմանավորված ուսանողների հոգեբանական առանձնահատկություններով: Հոդվածում փորձ է արվում ցույց տալ, որ դասավանդման յուրաքանչյուր մեթոդի ընտրությունը մեծապես կախված է այն լսարանից, թե որտեղ է այն կիրառվում, քանի որ այն պետք է համապատասխանեցնել ոչ միայն լսարանի ընդհանուր պահանջներին ու նպատակներին, այլ նաև ուսանողների հոգեկերտվածքին ու անհատական առանձնահատկություններին: Ներկայացնում ենք Քուվեյթի Միջին Արևելքի Ամերիկյան համալսարանում 17-20 տարիքային առանձնացված խմբերում կատարած հետազոտության որոշ արդյունքներ:

Քանալի բառեր. օտար լեզու, անգլերեն, հոգեբանական բնութագիր, արդյունավետ ուսուցում, դասավանդման մեթոդ, խառնվածք

Օտար լեզվի ուսումնասիրության ժամանակակից մեթոդների շարքը բազմաժանր է: Սակայն հատկանշական է, որ այսօր լեզվի ուսումնասիրման ժամանակակից մեթոդներից շատերը հոգեբանական նախադրյալներ ու սոցիալ-մշակութային ուղղվածություն ունեն: Լեզվի յուրացման գործընթացը մեծապես պայմանավորված է ոչ միայն անհատի՝ սոցիալական խավի ու էթնոմշակութային պատկանելությամբ, մայրենի լեզվի և ուսումնասիրվող լեզվի միջև առկա նմանություններով ու տարբերություններով, այլ նաև լեզուն սովորողի անհատականությամբ, նրա դիրքորոշմամբ:

Այսօր անգլերենի՝ որպես երկրորդ օտար լեզվի ուսուցման և դասավանդման երեք կարևորագույն մոտեցումներ են առանձնացվում, որոնք ընտրելիս պետք է հաշվի առնել ուսանողների լեզվական ունակություններն ու հոգեկերտվածքը: Դրանք են լսողական ուսուցման ձևը (auditory learning style), որը կենտրոնանում է մեծ մասամբ լսողական խթանների վրա, ինչպես խոսակցական լեզուն է, երաժշտությունը, ձայները, երկրորդը՝ տեսողական ուսուցման ձևն է (visual learning style), երբ կիրառվում են նկարներ, դիագրամաներ կամ սխեմաներ, և երրորդ՝ կինեստետիկ ուսուցման ձևը (kinaesthetic learning style), երբ, որպես դասավանդման մեթոդ, կիրառվում է շարժումը: Սակայն այս ռճերից

մեկն ընտրելուց առաջ նախ պետք է հասկանալ, թե ինչ անհատների հետ ենք աշխատելու լսարանում, արդյոք նրանք ինտրովերտ, թե էքստրովերտ են, ամաչկոտ են, թե շփվող, ուսուցման որ ոճում են իրենց ավելի ազատ զգում, նախընտրում են ռիսկի դիմել, թե զգուշանալ, և այլն: Նշեմ, որ քուլվեյթյան լսարաններում ցանկացած քերականական կամ այլ թեմայի մատուցումը զուգորդվում է այս երեք ոճերի համակցմամբ: Անհերքելի է, որ լեզվի դասավանդումն ու ուսուցումը հրաշալի արդյունք է տալիս այս ոճերի համակցմամբ: Քերականություն դասավանդելիս շատ արդյունավետ է կիրառել տեսողական ուսուցման ձևը, երբ դասավանդման նյութին կից ինտերակտիվ գրատախտակի վրա ներկայացվում են նկարներ, կարճ տեսաերիզներ և այլ նյութեր, որոնք ամրապնդում են տեսողական հիշողությունը՝ օգնելով ուսանողին ավելի արագ ու արդյունավետ յուրացնել նյութը: Սակայն կան բազաթիվ կարծիքներ այն հարցի շուրջ, թե վիզուալ ուսուցման ոճն արդյունավետ չի կարող լինել տարբեր հոգեկերտվածք, տարբեր վարքագիծ ունեցող ուսանողների համար: Այսինքն, այս ոճի արդյունավետությունը կախված է ուսանողի հոգեբանական առանձնահատկություններից: Կան մի շարք ուսումնասիրություններ, որոնք օգնում են որոշել ուսանողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, որոնք հեշտացնում կամ խոչնդոտում են ինֆորմացիայի արդյունավետ ընկալումը: Դրանք հոգեբանական գործոններ են, որոնք առնչվում են գիտաճանաչողական տարրերի՝ հիշողության, երևակայության, վերլուծաքննադատական մտածողության, ուշադրության, ստեղծագործական մտքի, ուսուցման նկատմամբ ուսանողի դրական վերաբերմունքի, մոտիվացիայի, կամքի ու հույզերի, ինքնագնահատականի հետ: Քուլվեյթյան լսարաններում ոչ միայն խրախուսվում, այլև պարտադիր է օրվա դասում ներառել PPT (PowerPoint Presentation) ծրագրով պատրաստված ցուցադրական դաս, որը նրանց կրթամշակույթում ավելի նախընտրելի է, քան դեմառդեմ դասավանդումը: Անգամ աշխատանքի ընդունելիս աշխատատուն ստուգում է դասախոսի ցուցադրական դաս վարելու ունակությունները: Պետք է նշեմ, որ օրվա դասի անքակտելի մաս հանդիսացող ցուցադրական դասը քուլվեյթյան լսարաններում անհրաժեշտություն է, քանի որ առանց դրա դասը պարզապես չի ընկալվի: Փորձեմ բացատրել՝ ինչու. քուլվեյթի ուսանողների մոտ չափազանց ցածր է ներքին մոտիվացիայի գործոնը, ինչը, ըստ իս, կարևորագույն հոգեբանական գործոնն է լեզուն սովորելիս: Ցուցադրական դասը, որը հագեցված է նկարներով, շարժանկարներով, դասին առնչվող կարճ տեսաերիզներով, անշուշտ, բարձրացնում է նրանց մոտիվացիան և դասին ակտիվ ներգրավվածությունը: Սակայն, ունենալով շատ առավելություններ, ցուցադրական դասը միևնույն ժամանակ չունի ինֆորմացիայի երկարաժամկետ պահպանման ու ամրապնդման այն առանձնահատկությունները, որն ունի, օրինակ, ավտոմատացման եղանակով ուսուցումը: Ուսանողները, կենտ-

րոնանալով նկարների, տեսահոլովակների վրա, հաճախ մոռանում են դասի թիրախային նյութն ու նպատակները: Մյուս կողմից, այն ուսանողները, որոնք աչքի են ընկնում տեսողական լավ հիշողությամբ, ավելի լավ են սերտում իրենց մատուցված նյութը: Սա ևս մեկ անգամ փաստում է այն մասին, որ ուսուցման այս ձևի հաջողությունը կախված է ուսանողի անհատական հոգեկերտվածքից:

Որոշեցինք մի հետաքրքիր հետազոտություն անել Միջին Արևելքի Ամերիկյան համալսարանի Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետի տարբեր խմբերում: Մասնակիցների թիվը 71-ն էր, միջին տարիքը՝ 19 տարեկան: Թեստի նպատակն էր պարզել, թե արդյոք ուսանողների հոգեբանական առանձնահատկություններն նպաստում են տարբեր ուսուցման ոճերի միջոցով նյութի ընկալմանը: Ներկայացված քերականական թեմաները երեքն էին՝ կրավորական սեռը, անցյալ կատարյալ ժամանակաձևը, ուղղակի-անուղղակի խոսքն անգլերենում, որոնք ներկայացվեցին բոլոր երեք լսարաններում՝ երեք տարբեր ուսուցման ոճերով: Հետազոտության համար էին ընտրվել վերոնշյալ մեթոդները՝ տեսողական, կինեստետիկ ու լսողական, և վերջինը՝ դեմառդեմ ուսուցման ձևերը: Առաջին լսարանում, կրավորական սեռը ներկայացվում էր դեմառդեմ (face to face) ուսուցման մեթոդով, որտեղ նյութը ներկայացվում էր մեծ մասամբ բացատրությունների ու գրատախտակային գրառումների միջոցով, այնուհետև ամրապնդվում գործնական աշխատանքներով ու վարժություններով: Մյուս խմբում կիրառվում է տեսողական ձևը, որը մատուցվում էր ցուցադրական դասի միջոցով՝ համեմված շարժանկարներով, սխեմաներով, աղյուսակներով, իսկ ահա երրորդում նույն դասը ներկայացվում էր կինեստետիկ ու լսողական դասավանդման ոճով, որը ներառում էր երաժշտական ու ձայնային տարրեր, ինչպես նաև ժեստեր ու շարժումներ: Արդյունքներն ամփոփելուց հետո հերթականությամբ այս երեք քերականական թեմաները ներկայացվեցին բոլոր երեք լսարաններում՝ վերոնշյալ տարբեր ոճերի կիրառմամբ: Ուսանողներին՝ ըստ հոգեկերտվածքի դասակարգելու նպատակով ընտրվել էին երեք հիմնական չափորոշիչներ, որոնք համապատասխանեցվել էին այդ երեք ուսուցման ոճերին: Հոգեբանական առանձնահատկությունները բացահայտող այդ չափորոշիչները հետևյալն էին՝ զուտ լեզվական ունակություններ, որին համապատասխանեցվել էր դեմառդեմ ուսուցման ոճը, խառնվածք, որին համապատասխանեցվել էր տեսողական ուսուցման ոճը, և հուզական բնութագիր, որին համապատասխանեցվել էր կինեստետիկ ու լսողական դասավանդման ոճը: Դասը համապատասխան ոճով ներկայացնելուց հետո հանձնարարվում էր գործնական աշխատանք՝ ստուգելու, թե ներկայացված նյութը որքանով էր ընկալվել լսարանի կողմից: Քերականական երեք թեմաների ներկայացումը երեք տարբեր ոճերում քիչ տարբերությամբ տվել է մոտավորպես նմանատիպ արդյունքներ, որոնք ներկայացված են աղյուսակ 1, 2, 3-ում:

Աղյուսակ 1. Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետ
ԹԵՄԱ. Կրավորական սեռն անգլերենում

Հոգեբան. փոփոխականներ	Թիվ	Դասավանդման մեթոդ
Հոգելեզվական ունակություններ	4	Դեմառդեմ
Խառնվածք	16	Տեսողական
Հուզական բնութագիր	3	Լսողական, կինեստետիկ

Աղյուսակ 2. Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետ
ԹԵՄԱ. Ուղղակի-անուղղակի խոսքը անգլերենում

Լեզվական ունակություններ	4	Դեմառդեմ
Խառնվածք	22	Տեսողական
Հուզական բնութագիր	2	Լսողական, կինեստետիկ

Աղյուսակ 3. Բիզնես ադմինիստրացիա ֆակուլտետ
ԹԵՄԱ. Անցյալ անկատար ժամանակաձևը անգլերենում

Լեզվական ունակություններ	3	Դեմառդեմ
Խառնվածք	26	Տեսողական
Հուզական բնութագիր	1	Լսողական, կինեստետիկ

Ամփոփելով արդյունքները՝ միանշանակ կարելի է ասել, որ քուվեյթյան լսարաններում դասավանդման ամենաարդյունավետ միջոցը տեսողական է, քանի որ փորձը ցույց է տալիս, որ 71 մասնակիցներից 54-ը գործնական աշխատանքն անթերի կատարում են միայն այս ոճով դասը լսելուց հետո, 11-ը՝ դեմառդեմ դասավանդման արդյունքում անսխալ կատարում են առաջադրանքը, և ահա միայն 5-ը հաջողում են լսողական-կինեստետիկ ոճում: Ինչ վերաբերում է հոգեբանական փոփոխականներին, որոնք ընտրվել ու համապատասխանեցվել են դասավանդման մեթոդներին, ստացվում է հետևյալը. 71-ից 54-ը, որոնք, ըստ հոգեբանական առանձնահատկությունների չափման միավորի, դասակարգվել էին խառնվածք չափարոշի տակ, բավականին շատ հարցեր են տալիս, վճռական ու դրական են տրամադրված, կարողանում են կենտրոնանալ առարկաների և դեպքերի միջև պատճառահետևանքային կապերի վրա, բարձր է լսարանում մրցակցության գործոնը, խմբակային, այլ ոչ անհատական աշխատելու մղումը, մոտիվացիան: Սակայն թե որքանով կարելի է վստահեցնել, որ այս մեթոդով յուրացված ինֆորմացիան կայուն է ու երկարաժամկետ, դժվար է ասել: Դեմառդեմ ուսուցման մեթոդը ցույց է տալիս, որ ուսանողներն ունեն լեզվական, խոսքային ու հաղորդակցական զարգացած հմտություններ, ինֆորմացիան մշակելու ու վերարտադրելու տեսանկյունից բավականին ճկուն են ու արագ,

կարողանում են ինֆորմացայի մշակում ու վերծանում անել, կարևորն անկարևորից կամ առաջնայինը երկրորդականից տարբերել, տրամաբանել, լեզվական ճկունություն ցուցաբերել, գերադասում են անհատական աշխատանքը թիմայինից: Այս մասնակիցներն այն ուսանողներն են, որոնք տեսողական կամ լսողական նյութերի օգնության կարիքը չունեն, ինքնավստահ են, ունեն վերլուծական մտածողություն, զարգացած արտաքին խոսք, հստակ նպատակներ: Այս ուսանողների հետ հեշտությամբ կարելի է աշխատել ինդուկտիվ-դեդուկտիվ մեթոդով, որը դրդում է ուսանողին մտածել, եզրակացություններ անել, առողջ բանավիճել, վերլուծել, քննադատական մտածողություն ձեռք բերել: Այս մեթոդը, այնուամենայնիվ, մի թերություն ունի. այն ժամանակատար է: Վերջին՝ ամենաքիչ թվով մասնակիցների՝ լսողական-կինեստետիկ ոճում հաջողելը կապված է նրանց երազանքների, հոբբիների, որոշակի լսողական զարգացած հմտությունների, երաժշտական ու թատերական այդպես էլ չիրականացած որոշ հակումների հետ: Այս խումբն առանձնացվում է որպես երազողներ, պարելու կամ երգելու հակում ունեցողներ, թատերական տաղանդ ունեցող, բայց սոցիալական որոշ սահմանափակումների պատճառով այն չդրսևորած ուսանողներ: Նրանք չափազանց հուզական են, շուտ են ոգևորվում ու հիասթափվում, անկաշկանդ են լսարանում: Հետաքրքրական է, որ այս հետազոտության միջոցով կարելի է պարզել, թե հոգեբանական ինչ առանձնահատկություններով են օժտված այս ուսանողները, դասավանդման որ ոճը կարելի է կիրառել տվյալ լսարանում, և ինչ արդյունավետություն կարելի է ակնկալել ուսուցման գործընթացում տարեվերջին: Այս ամենն իհարկե անհրաժեշտ է ուսուցչին, սակայն կարծում եմ, որ ուսուցիչը նախքան կիսամյակի մեկնարկը պետք է հակիրճ ներկայացնի ուսանողներին դասավանդման և նյութի ընկալման ու ամրապնդման մի քանի մեթոդ, որը պատրաստվում է կիրառել տվյալ լսարանում: Սա երկուստեք շահավետ գործարք կարող է լինել ուսանողի և ուսուցչի միջև մի քանի պատճառներով. նախ այդ դասավանդման ոճերի մասին ուսուցչի պատրաստած փոքրիկ ներածությունն ուսանողների մեջ ի սկզբանե հետաքրքրություն կառաջացնի ուսումնասիրվող առարկայի նկատմամբ, ուսանողներն իրենք կզգան, թե որ ոճն է ավելի համընկնում իրենց նախապատվություններին: Իսկ ուսուցիչն այդ ընթացքում տարբեր հարցաթերթային թեստերի միջոցով կփորձի հասկանալ, թե ուսանողի այս կամ այն ոճի ընտրությունը ինչով է պայմանավորված, կարևորել ու բացատրել ուսանողներին իրենց ընտրության առավելություններն ու թերությունները: Այս կերպ ուսուցիչը կարող է հարմարեցնել դասավանդման իր մեթոդը ուսանողի նախընտրած ուսուցման ոճի հետ՝ պայմանավորված տվյալ ուսանողի հոգեկերտվածքով: Անհերքելի է, որ դասավանդման բոլոր հին ու նոր ոճերն ու մեթոդներն ունեն իրենց առավելություններն ու թերությունները, սակայն նրանց համապարփակ կիրառումը գերազանց արդյունքներ է տալիս,

սակայն չպետք է մոռանալ, որ վերոհիշյալ մեթոդների յուրաքանչյուրի կիրառումը մեծապես կախված է այն լսարանից, որտեղ այն կիրառվում է, քանի որ այն պետք է համապատասխանեցնել լսարանի ընդհանուր պահանջներին ու նպատակներին, ուսանողների հոգեկերտվածքին ու անհատական առանձնահատկություններին:

Հստակ է, որ երկրորդ լեզվի ուսումնասիրությունը բազմաշերտ է և ունի բազմաթիվ ասպեկտներ՝ լեզվական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, և դրանցից յուրաքանչյուրը պակաս կարևոր չէ մյուսից, ուստի, նախքան լեզուն ուսումնասիրել սկսելը, պետք է հաշվի առնել ուսանողի հույզերը, կարիքները, հայեցողությունը, նպատակները, շարժառիթը, հարաբերություններն ընտանիքի, դասընկերների և ուսուցչի հետ, էմոցիոնալ կարգավիճակը, և շատ այլ գործոններ, որոնք այսօր անտեսվում են ուսուցիչների կողմից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Herrell A. L., Jordan M. L. 50 Strategies for Teaching English Language Learners. New Jersey: Pearson/Merrill Prentice Hall, 2008.
2. Hadfield J. Introduction to Teaching English. Canada: Oxford University Press Canada, 2008.
3. Nation P. Teaching ESL/EFL reading and writing. New York: Routledge, 2009.
4. URL: <http://www.opencolleges.edu.au/informed/features/educational-psychology-20-things-educators-need-to-know-about-how-students-learn/>

Լ. МЕЛИКЯН – Роль психологических факторов при выборе методов обучения английскому языку арабских студентов в Американском университете Кувейта. – В статье рассматриваются некоторые вопросы, связанные с особенностями преподавания английского языка арабским (кувейтским) студентам с учетом их психологических особенностей. Выбор методов обучения обусловлен особенностями аудитории, ее потребностями, а также целями и задачами обучения, при этом необходимо учитывать психологические и личностные особенности студентов. В статье представлены результаты исследования, проведенного в арабских сегрегированных группах (в возрасте от 17 до 20 лет) Американского университета Кувейта, которые раскрывают некоторые психологические особенности студентов, тем самым помогая преподавателю в выборе наиболее эффективного метода преподавания иностранного языка.

Ключевые слова: иностранный язык, английский, психологические особенности, эффективное обучение, метод преподавания, темперамент

L. MELIKYAN – *Matching English Language Teaching Methods in Kuwaiti Classrooms with the Psychological Characteristics of Arab Students.* – The paper discusses some issues pertaining to English language learning and teaching style considering the psychological characteristics of the Arab (Kuwaiti) students. The paper brings forward the idea that being selective with the appropriate method of learning or teaching a language depends on the class one is going to teach, as a teacher needs to match the method with the learning goals and requirements of the class and the students' psychological and personal characteristics. The paper introduces some research results carried out in Arab segregated groups (aged 17-20) of the American University of the Middle East of Kuwait, which reveal some psychological features of the students, thus helping the teacher choose the most appropriate and effective method of teaching a foreign language and making the academic process mutually productive.

Key words: foreign language, English, psychological characteristics, effective teaching, teaching methods, temperament